



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2018 թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ՍԱՔՈՒՆՅԻՆ
hhakobyan@hcav.am

Ձեր 06.04.2018թ. թիվ Ե/ 2018-06-04/279 գրությանը

Հարգելի պարոն Սաքունց

Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում լեռնադահուկային կենտրոն ստեղծելու ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 2018թ. մարտի 6-ի արձանագրային թիվ 9 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում լեռնադահուկային կենտրոն ստեղծելու նպատակով հասարակության և պետության կարիքների համար օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության մասին» թիվ 291-Ն որոշումներով հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում լեռնադահուկային կենտրոն ստեղծելու ներդրումային ծրագրին և «Մայմեխսկի ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ձեռք բերող), թույլատրվել է որոշման հավելվածում նշված կողողինատներին համապատասխանող եզրագծի սահմաններում՝ 584 հեկտար, իրականացնել օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրություն՝ կատարել չափագրումներ, նկարահանումներ և կազմել օտարման ենթակա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրությունները:

Սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանն է:

Նախնական ուսումնասիրության տարածքը ընդգրկում է Լոռու մարզի Անտառաշեն և Լերմոնտովո համայնքների վարչական սահմաններում գտնվող տարբեր սեփականության ձևերի հողատարածքներ, որոնց մասով կազմվելու է օտարման ենթակա անշարժ գույքի նկարագրային արձանագրություններ և անհրաժեշտության դեպքում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կներկայացվի օտարման ենթակա գույքի ցանկը, որոնց նկատմամբ կսահմանվի հանրային գերակա շահ, որից հետո օրենքով

սահմանված կարգով կիրականացվի անշարժ գույքի շուկայական գնահատում՝ օրենքով սահմանված փոխհատուցման չափը սահմանելու նպատակով:

Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում լեռնադահուկային կենտրոն ստեղծելու ներդրումային ծրագրին վերաբերվող իրավական ակտերը:

Առդիր 3 ֆայլ:

Հարգանքով՝



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ